



“Աուդիտ Սթար” ՍՊԸ

[auditstar@mail.com](mailto:auditstar@mail.com)

## “Աուդիտ Սթար” ՍՊԸ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եվ այդ ամսաթվին  
ավարտված տարվա

# Ֆինանսական հաշվետվություններ

# Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

### “Աուդիտ Սթար” ՍՊԸ

առ 31.12.2018թ.

Հազար դրամ	Ծնթգ	31.12.2018թ.	31.12.2017թ.
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	-	-
Ոչ նյութական ակտիվներ	5	250	250
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>250</b>	<b>250</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6	368	392
Ընթացիկ հարկային ակտիվներ		45	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	256	630
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>669</b>	<b>1022</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>919</b>	<b>1272</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Սեփական կապիտալ</i>			
Կանոնադրական կապիտալ		50	50
Կուտակված շահույթ		706	-
Պահուստներ		5	5
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>761</b>	<b>55</b>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,		-	-
Ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով	8	73	1217
Ընթացիկ պարտավորություններ աշխատավարձի գծով		85	-
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>158</b>	<b>1217</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>919</b>	<b>1272</b>

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2018թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծնթգ.	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Ծառայությունների մատուցումից հասույթ	9	8658	14333
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	10	(5683)	(6421)
<b>Համախառն շահույթ</b>		<b>2975</b>	<b>7912</b>
Այլ եկամուտ		-	7
Տոկոսային եկամուտ		-	-
Վարչական և այլ ծախսեր	10	(2092)	(2154)
Դեբիտոր. պարտք. կորուստ. գծով ծախսեր		(-)	(-)
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>883</b>	<b>5765</b>
<b>Շահութահարկի գծով ծախս</b>		<b>(177)</b>	<b>(1153)</b>
<b>Տարվա շահույթ</b>		<b>706</b>	<b>4612</b>

## Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

2018թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծնթգ.	2018թ.	2017թ.
<u>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</u>			
Հաճախորդներից ստացված դրամական մուտքեր		10290	17200
Գործառնական գործունեությունից այլ դրամական միջոցների մուտքեր		-	2188
Վճարումների ստացված ծառայությունների դիմաց		(3393)	(4972)
Վճարումներ աշխատակիցներին և աշխատակիցների անունից		(2606)	(4114)
Վճարումներ բյուջե ներառյալ սոցապ վճարը		(4259)	(5863)
Գործառնական գործունեությունից այլ դրամական միջոցների արտահոսքեր		(406)	(1513)
<b>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(374)</b>	<b>2926</b>
<u>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</u>			
Ստացված շահաբաժին և տոկոս		-	-
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում		(-)	(-)
<b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(-)</b>	<b>(-)</b>
<u>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</u>			
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ		(-)	(18621)
<b>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(-)</b>	<b>(18621)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</b>		<b>(374)</b>	<b>(15695)</b>
Փոխարժեքային տարբերություններ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում		630	16325
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում		256	630

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2017թ.

	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	պահուստային կապիտալ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	50	13643	5	13698
Հաշվետու տարվա շահույթ (զուտ կորուստ) Շահաբաժիններ		4612		4612
		(18255)		(18255)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	0	5	55

2018թ.

	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	պահուստային կապիտալ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	50	0	5	55
Հաշվետու տարվա շահույթ (զուտ կորուստ) Շահաբաժիններ		706		706
		-		-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	706	5	761

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. *Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ*

«Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն ստեղծվել է 1997թ. և գրանցվել է ՀՀ պետոռեգիստրում 19.12.1997թ, գրանցման համարն է 286.110.03058 : Ընկերության գտնվելու և փաստացի գործունեության իրականացման վայրն է՝ Ք. Երևան, Էմինեսկու 1-ին փող.տուն 19 ա :

Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02537739:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմում է 5 մարդ :

ՀՀ Ֆինանսների եվ Էկոնոմիկայի նախարարության կողմից 03.11.1997թ. ընկերությանը տրվել է ձեռնարկության աուդիտ իրականացնելու թիվ 027 եվ բանկային աուդիտ իրականացնելու թիվ 028 լիցենզիաները: Ընկերությունը այնուհետև վերալիցենզավորվել է և 27.12.2002թ. ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից ստացել է աուդիտորական ծառայությունների իրականացման թիվ 015 լիցենզիան:

Ընկերության հիմնադիրները և մասնակիցներն են՝

Արմեն Մելքոնյան՝ 100% (հարյուր բաժնեմաս, յուրաքանչյուրը 500 դրամ անվանական արժեքով )

## 2. *Պատրաստման հիմունքներ*

### 2.1 *Համապատասխանության մասին հայտարարություն*

Ընկերությունը հայտարարում է, որ 2018 թ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՖՀ Սիջազգային ստանդարտներին համապատասխան:

### 2.2 *Հաշվեգրման հիմունքը*

Կազմակերպությունը պատրաստում է իր ֆինանսական հաշվետվությունները հաշվեգրման հիմունքով, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության :

### 2.3 *Էականություն և միավորում*

Կազմակերպությունը համանման հողվածների յուրաքանչյուր էական դաս ներկայացնում է առանձին: Կազմակերպությունը տարբեր բնույթի և գործառույթի հողվածները ներկայացնում է առանձին, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական չեն:

## **2.4 Հաշվանցում**

Կազմակերպությունը չի հաշվանցում ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ թույլատրվում է ՖՀՄՍ-ներով:

## **2.5 Ներկայացման հետևողականություն**

Կազմակերպությունը պահպանում է ֆինանսական հաշվետվությունների հողվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը:

## **2.6 Ֆինանսական հաշվետվությունների նույնականացում**

Կազմակերպությունը հրապարակվող միևնույն փաստաթղթում ֆինանսական հաշվետվությունները հստակ նույնականացնում է և տարբերակում է այլ տեղեկատվությունից:

## **2.7 Չափման հիմունքերը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական / պատմական / արժեքի հիմունքով:

## **2.8 Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության գործառնական արժույթն է, քանի որ վերջինս լավագույն կերպով է ներկայացնում Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ, քանի որ Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ այս արժույթը առավել օգտակար է այս ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## **2.9 Գնահատումների և դատողությունների օգտագործում**

ՀՀՄՍ-ին համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և դատողություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

## **2.10 Հաշվետվությունների հաստատումը և ստորագրումը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հատատվել են 04.03.2019թ.

**3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն** Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության, որի դրույթները համապատասխանաբար կիրառված են:

**(ա) Արտարժույթ**



### *Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ժամանակ գործառնական արժույթից տարբեր արժույթով կատարված գործարքները գրացվել են գործարքի կատարման ամսաթվին ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

Դրամային հոդվածների վերահաշվարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի եկամուտների կամ ծախսերի մեջ:

### *(բ) Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով:

#### -Սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդել

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

#### -Հետագա ծախսումներ

Ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց: Այդ ծախսումների նպատակը հաճախ նկարագրվում է որպես հիմնական միջոցների միավորի «վերանորոգում և պահպանում»:

#### -Մաշվածություն

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

#### -Մաշվող գումարը և մաշվածության ժամկետը

Ակտիվի մաշվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է դրա օգտակար ծառայության ընթացքում:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները հաշվառվում են որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածության հաշվարկի քաղաքականությունը գծային է ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետում, որոնք են՝

- համակարգչային տեխնիկա - 1 տարի
- այլ հիմնական միջոցներ - 8 տարի

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Կիրառվող ստանդարտը՝ ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»,

### ***(գ) Ոչ նյութական ակտիվներ***

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը : Օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածքը իրականացվում է գծային մեթոդով օգտակար ծառայության գնահատված ժամկետում:

Մաշվածության հաշվարկի քաղաքականությունը գծային է ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետում, որն է՝

- Լիցենզիա --- ---1 տարի
- Հաշվապահական ծրագրեր ---1 տարի

Ընկերությունը *Ոչ նյութական ակտիվների* բացահայտումը և հաշվառումը կատարում է ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ » ստանդարտից ելնելով:

### ***(դ) Առևտրային դեբիտորական պարտքեր***

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները սկզբնապես սահմանված ժամկետներում: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները և ավելի քան 365 օր ժամկետանց պարտավորությունը ցուցանիչ է այն բանի, որ դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի գումարը դա ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

**(ե) Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում՝ անորոշագույն արժեքով:

**(զ) Կանոնադրական կապիտալ**

Դիվիդենտները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակ, երբ հայտարարվում են: Վերջին երեք հաշվետու ժամանակաշրջաններում ընկերությունը աշխատել է շահույթով և մշտապես կատարել է դիվիդենտի վճարումներ:

**(է) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Եթե վերը նշված պայմանները չեն բավարարվում, ապա պահուստ չպետք է ճանաչվի:

**(ը) Հասույթ**

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

**-Ծառայությունների մատուցում**

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝ հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

**-Տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ**

Այլ անձանց կողմից կազմակերպության ակտիվներն օգտագործելիս առաջացող հասույթները՝ տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են երբ՝ հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթների գումարը:

Հասույթը ճանաչվում է հետևյալ հիմունքներով՝

- ա) տոկոսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը,
- բ) ռոյալթիները ճանաչվում է հաշվեգրման հիմունքով՝ համապատասխան համաձայնագրի բովանդակության համաձայն.

զ) Շահաբաժինները ճանաչվում են, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը: 2018թ ֆինանսական արդյունքներով հայտարարվել է շահաբաժինների բաշխում 706 հազ. դրամի չափով:

***(թ) Շահութահարկի գծով ծախս***

Բաղկացած է ընթացիկ և հետաձգված ծախսից և ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընթացիկ հարկի գծով ծախսը հաշվարկվում է տարվա կտրվածքով հաշվեկշռի ամսաթվի դրությամբ համաձայն օրենքով սահմանված տոկոսադրույքի, որը կազմում է 20 %: Հետաձգված հարկի գծով ծախսը ճանաչվում է հաշվի առնելով ակտիվների և պարտավորությունների ժամկետային ֆինանսական և հարկային հաշվառման տարբերությունները:

***(ժ) Աշխատակիցների գծով հատուցումներ***

Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, կազմակերպությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունը ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին վճարվելիք մասհանումը ճանաչում է որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված մասհանումները հանելուց հետո: Եթե արդեն վճարած մասհանումը գերազանցում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ծառայության դիմաց վճարվելիք մասհանումը, ապա կազմակերպությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի:

***(ի) Դրամական միջոցներ***

Ընկերությունը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պատրաստում է ՖՀՄՍ ստանդարտի պահանջներին համապատասխան, որպես իր ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս՝ յուրաքանչյուր այն ժամանակաշրջանի համար, որի համար ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններ: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պատրաստում է ուղղակի մեթոդով, ըստ որի բացահայտվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական դասերը:

***4. Հիմնական միջոցներ***

2017 թ. Հազար դրամ

Նկարագրություն 2017թ. հունվարի Ավելացում նվազում 2017թ.

	1-ի դրությամբ			դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գույք և այլ հիմնական միջոցներ				
Սկզբնական արժեք	1438	-	-	1438
Մաշվածություն	1438	-	-	1438
Հաշվեկշռային արժեք	0			0
<b>Ընդամ. հիմն. միջոցներ</b>	<b>1438</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1438</b>
Սկզբնական արժեք				
Մաշվածություն	1438	-	-	1438
<b>Հաշվեկշռային արժեք</b>	<b>0</b>			<b>0</b>

2018 թ. Հազար դրամ

Նկարագրություն	2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Գվազում	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գույք և այլ հիմնական միջոցներ				
Սկզբնական արժեք	1438	-	-	1438
Մաշվածություն	1438	-	-	1438
Հաշվեկշռային արժեք	0			0
<b>Ընդամ. հիմն. միջոցներ</b>	<b>1438</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1438</b>
Սկզբնական արժեք				
Մաշվածություն	1438	-	-	1438
<b>Հաշվեկշռային արժեք</b>	<b>0</b>			<b>0</b>

### 5. Ոչ նյութական ակտիվներ

2018թ. Հազար դրամ

Նկարագրություն	2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Օտարում	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սկզբնական արժեք
Արժեք	412	250	250	412

Մաշվածություն	162	0	0	162
Հաշվեկշռային արժեք	250	250	250	250

**6. Առևտրային դեբիտորական պարտքեր և կանխավճարներ**

<i>Հազար դրամ</i>	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
Կանխավճարներ	368	392
<b>Ընդամենը</b>	<b>368</b>	<b>392</b>

**7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

<i>Հազար դրամ</i>	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
Ընթացիկ բանկային հաշիվներ/ դրամ	9	9
Դրամարկղ	247	621
<b>Ընդամենը</b>	<b>256</b>	<b>630</b>

**8. Ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով**

<i>Հազար դրամ</i>	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
Շահութահարկ	-	708
ԱԱՀ	-	421
Եկամտահարկ	66	83
Սոցապ հատկացումներ	3	4
Դրոշմանիշային վճար	4	5
<b>Ընդամենը</b>	<b>73</b>	<b>1217</b>

**9. Հասույթի / եկամտի կառուցվածքը հազ. դրամ**

	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
<b>Ծառայությունների մատուցումից հասույթ</b>		
Առևտրորական և հարակից ծառայություններից	8658	14333

հասույթ	-	-
Այլ հաշվ. և խորհրդատվական ծառայություններից	-	-
<b>Ընդամենը</b>	<b>8658</b>	<b>14333</b>
Դեբիտորական պարտքերի կորուստների հակադարձումից եկամուտ	-	-
Ֆինանսական / տոկոսային / եկամուտ	-	-
Այլ եկամուտ	-	7
<b>Ընդամենը այլ եկամուտներ</b>	<b>-</b>	<b>7</b>
<b>Ընդամենը եկամուտներ</b>	<b>8658</b>	<b>14340</b>

**10. Ծախսերի կառուցվածքը** *հազ. դրամ*

	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
<b>Մատուցված ծառայությունների ինքնարժեք</b>		
Աշխատավարձ և սոցապ վճարներ	3653	4031
Գործուղման եվ ներկայացուցչական ծախսեր	350	710
Վարձավճարներ	1680	1680
<b>Ընդամենը ծառայությունների ինքնարժեք</b>	<b>5683</b>	<b>6421</b>
<b>Վարչական և այլ ծախսեր</b>		
ՀՄ նորոգում և մաշվածք	-	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	32	150
Հարկերի գծով ծախսեր	260	315
Գրասենյակային եվ կոմունալ ծախսեր	1721	1141
Բանկային ծառայության ծախսեր	39	51
Իրավաբանական ծախսեր	-	400
Այլ ծախսեր	40	97
<b>Ընդամենը Վարչական և այլ ծախսեր</b>	<b>2092</b>	<b>2154</b>
<b>Շահութահարկի գծով ծախս</b>	<b>177</b>	<b>1153</b>
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>7952</b>	<b>9728</b>

## 11. Ֆինանսական ռիսկի կառավարում

Ֆինանսական գործիքների օգտագործմամբ ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին՝

- պարտքային
- լիկվիդայնության
- շուկայական(գնի)

Այս բացահայտումը արտահայտում է յուրաքանչյուր ռիսկի ազդեցությունը, ընկերության քաղաքականությունը և գործունեությունը ռիսկը չափելու և կառավարելու և վերահսկելու համար, որի համար ընկերության ղեկավարությունը ամբողջովին պատասխանատու է: Իր սովորական գործունեության ընթացքում ընկերությունը ենթարկվում է պարտքային, փոխարժեքային ռիսկերին, ուստի դրանց ազդեցությունը չպետք է հեջավորվի:

### 12.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստի ռիսկն է, երբ ֆինանսական գործարքի մյուս կողմը հրաժարվում է կատարել պայմանագրային պարտավորությունները: Ընկերությունը ցուցաբերում է յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին, գործարքի կողմին: Մասնավորապես հաշվի է առնվում վիճակագրական, արդյունաբերական տվյալներ, որոնք նվազեցնում են այդ ռիսկը: Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը

Առավելագույն պարտքային ռիսկայնությունը ֆինանսական գործիքների գծով ըստ ապահովվածության հետևյալն է:

<i>հազ.դրամ</i>	<i>31.12.2018թ.</i>	<i>31.12.2017թ.</i>
Առևտրային դեբիտորական պարտքեր	368	392
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	256	630

### 12.2 Լիկվիդայնության ռիսկ

Դա ընկերության ֆինանսական պարտավորությունների կատարման անկարողությունն է երբ այն անհրաժեշտ է մարել: Ընկերությունը կառավարում է լիկվիդայնությունը, համոզված լինելով, որ միշտ ունի համապատասխան լիկվիդային ակտիվներ, որպեսզի մարի առաջացող հնարավոր պարտավորությունները ծայրահեղ և սովորական իրավիճակներում, առանց անթույլատրելի կորուստների կամ ռիսկային վնասների:

31.12. 2018թ. դրությամբ



Պարտավորություններ		Իրացվելի ակտիվներ	
Ընթացիկ	85	Դրամական միջոցներ	256
պարտավորություններ աշխատավարձի գծով		Ընթացիկ հարկային ակտիվներ	-
Ընթացիկ հարկերի գծով	73	դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	413
<b>Ընդամենը</b>	<b>158</b>		<b>669</b>

### 12.3 Շուկայական(զմի) ռիսկ

Իր մեջ ներառում է փոխարժեքային տարբերությունը, տոկոսները և կապիտալի գնային փոփոխությունները: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է վերահսկել շուկայի ազդեցությունը ընդունելի չափանիշների միջև, օպտիմալացնելով մարումները: Ընկերությունը չի հեջավորում շուկայական ռիսկը:

#### ա) Արտարժույթային ռիսկ.

Ընկերությունը հաշվետու տարում չի իրականացրել գործարքներ արտարժույթով, հետևաբար, արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցություն չի ունեցել : Դեկավարությունը չի հեջավորում Ընկերության ենթարկումը արտարժույթային ռիսկին:

#### բ) Տոկոսների փոփոխության ռիսկ

Տոկոսային փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի և փոխառությունների վրա, փոփոխելով դրանց ընթացիկ արժեքը: Ընկերությունը փոխառություն և վարկ չունի, հետևաբար չունի նաև փոխառությունների ռիսկ:

### 13. Լրացուցիչ, չնախատեսված հանգամանքներ

#### Ապահովագրություն

Ապահովագրությունը Հայաստանում զարգացման փուլում է և համաշխարհային ապահովագրական տարբեր ձևեր դեռևս մատչելի չեն ՀՀ-ում: Ընկերությունը չունի լրիվ ապահովված ապահովագրություն գույքի, սարքավորումների, առևտրի ընդհատման, շրջակա միջավայրի ազդեցության, պատահարների և այլ տիպի ապահովագրություններ: 2012թ-ից ՀՀ-ում գործում է ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրությունը: Մինչև ընկերությունը չունենա վերը նշված ապահովագրական ձևերը, այն կենթարկվի այս ռիսկերին և համապատասխանաբար կորուստների:

### 14. Դատական պրոցեսներ

2018թ. ընթացքում ընկերությունը դատական գործընթացների չի մասնակցել:

**15. Հարկային քաղաքականություն**

2018թ-ը բացառություն չէր հարկային օրենսդրության, վարչարարության փոփոխության առումով: Հարկերի հաշվառումը ենթարկվում է շարունակական ստուգման և վերահսկման հարկային տեսուչության կողմից, որը լիազորված է առաջադրել հարկային տույժեր և տուգանքներ: Այս հանգամանքները ստեղծում են հարկային ռիսկեր: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և, եթե այդ մեկնաբանությունները կիրառվեն, ապա հետևանքները կարող են էական ազդեցություն ունենալ այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

**16. Գործարքներ կապակցված կողմերի միջև**

Վերահսկողություն

Ընկերության կապակցված կողմերի հետ տարվա ընթացքում կատարված գործարքներն են՝

հազ.դրամ

<b>Հազար դրամ</b>	<b>2018</b>	<b>2017</b>
գործառնական վարձակալություն Ա. Մելքոնյան	1680	1680

**17. Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառվում է “Աշխատավարձ և աշխատակիցներին հատուցումներ” հոդվածում:

<b>Հազար դրամ</b>	<b>2018թ</b>	<b>2017թ</b>
Աշխատավարձ և աշխատակիցներին հատուցումներ	876	876

**18. Հետագա ռեպեր**

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ճշգրտման անհրաժեշտություն կամ բացահայտման ենթակա դեպքեր չկան:

Արմեն Մելքոնյան  
Տնօրեն

